# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Շինարարական վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված N ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/78 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025թ. սեպտեմբերի 05-ին կնքված N ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/78-1 ծածկագրով պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2026թ. փետրվարի 25-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** 2026թ. փետրվարի 25-ին կատարված փոփոխությունների արդյունքում.

1. Պայմանագրի Հավելված N 2.1, N 2.3, N 2.4-ով ներկայացված աշխատանքի կատարման ժամկետը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ Համաձայնագիր 1-ի N 1.1, N 1.3, N 1.4-ի:
2. Պայմանագրի Հավելված N 3-ով ներկայացված «Վճարման ժամանակացույց»-ը փոփոխվել և հաստատվել է համաձայն Համաձայնագիր 1-ի Հավելված 2-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** Պայմանագիրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից աշխատանքի կատարման ձեռքբերման պահանջը չի դադարել և աշխատանքների կատարման ձեռքբերման համար «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյունքում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 8.5 և 8.16 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ**